Նախագիծ

Կ-978-03.12.2024-ԳԿ-011 **Երկրորդ ընթերցում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում.

1. վերջին չհամարակալված պարբերության «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2. վերջին չհամարակալված պարբերությունից հետո լրացնել նոր չհամարկալված պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«**տարածական հաշվառում՝** «Տարածական տվյալների մասին» օրենքով սահմանված տարածական օբյեկտի արտացոլումը կադաստրային քարտեզում:»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «պատմամշակութային» բառը փոխարինել «պատմության և մշակույթի անշարժ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «22) իրականացնում է պետական սեփականություն համարվող՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական գրանցումը, ինչպես նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածական հաշվառումը.»:

2. 2-րդ մասը լրացնել նոր՝ 23-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «23) Սույն օրենքով նախատեսված տարածական հաշվառման առանձնահատկությունների հաշվառմամբ

իրականացնում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքի և պահպանական գոտիների տարածական հաշվառում:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր՝ 47.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 47.2. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքի և պահպանական գոտիների տարածական հաշվառման առանձնահատկությունները**

1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքը (այսուհետ՝ հուշարձանի տարածք) և պահպանական գոտին տարածական հաշվառման են ենթարկվում հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ հուշարձանների պահպանության լիազորված մարմին) նախաձեռնությամբ՝ վերջինիս կողմից կազմված հուշարձանի տարածքի, դրա պահպանական գոտիների հատակագծի, ինչպես նաև հուշարձանի անվան և պետական ցուցիչի հիման վրա:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի պահպանական գոտին կամ հուշարձանի տարածքն ընդգրկում է համայնքին կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամաս կամ դրա մի մասը, ապա այդ պահպանական գոտու կամ հուշարձանի տարածքի տարածական հաշվառումն իրականացվում է հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից նախապես տվյալ հողամասի սեփականատիրոջ (սեփականատերերի) գրավոր համաձայնությունը ձեռք բերելու դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և հուշարձանների տարածքների և դրանց պահպանական գոտիների հատակագծերը կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից՝ «Տարածական

տվյալների մասին» օրենքով սահմանված ազգային գեոպորտալի «Օ Ջի Սի Վի էմ Էս» (OGC WMS) առցանց քարտեզագրական ծառայության միջոցով հասանելի բազային տարածական տվյալների հիման վրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տարածական հաշվառումը անշարժ գույքի պետական ռեգիստրն իրականացնում է հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների հատակագիծը, հուշարձանի անվան և պետական ցուցիչի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ նաև սեփականատիրոջ (սեփականատերերի) գրավոր համաձայնությունը հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, որը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ ևս տասն աշխատանքային օրով՝ ներկայացված փաստաթղթերի մեծածավալությամբ պայմանավորված:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատակագծերի օրինակելի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները, հատակագծերի կազմման և ներկայացման և տարածական հաշվառման իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հուշարձանի, հուշարձանի տարածքի և պահպանական գոտու տարածական հաշվառման դեպքում պարտադիր նշում է կատարվում համապատասխան հուշարձանի անվան և հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից տրամադրված պետական ցուցիչի վերաբերյալ:

7.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տարածական հաշվառում իրականացնելուց հետո հուշարձանի, հուշարձանի տարածքի կամ պահպանական գոտու հաշվառման վերաբերյալ անհամաձայնությունների դեպքում համապատասխան անշարժ գույքի սեփականատերը կարող է տարածական հաշվառման փոփոխություն կատարելու դիմում ներկայացնել հուշարձանների պահպանության լիազորված մարմնին, որը քննվում է եռօրյա ժամկետում:

8. Դիմումի բավարարման դեպքում հուշարձանների պահպանության լիազորված մարմինը եռօրյա ժամկետում հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների

փոփոխված հատակագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է անշարժ գույքի պետական ռեգիստր՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետներում տարածական հաշվառման տվյալներում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

9. Դիմումի մերժման դեպքում հուշարձանների պահպանության լիազորված մարմինը դիմում ներկայացնող անձին հիմնավորում է տարածական հաշվառման տվյալներն անփոփոխ թողնելու պատճառները:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 4-րդ հոդվածի:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ութ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների հատակագծերի օրինակելի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները, հատակագծերի կազմման և հատակագծերի ներկայացման և տարածական հաշվառման իրականացման կարգը սահմանելու մասին որոշում:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը և 4-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ուժի մեջ մտնելու օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ ~~հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ~~հոդվածում.

1. վերջին չհամարակալված պարբերության «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2. վերջին չհամարակալված պարբերությունից հետո լրացնել նոր չհամարկալված պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«**տարածական հաշվառում՝** «Տարածական տվյալների մասին» օրենքով սահմանված տարածական օբյեկտի արտացոլումը կադաստրային քարտեզում:»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «պատմամշակութային» բառը փոխարինել «պատմության և մշակույթի անշարժ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «22) իրականացնում է պետական սեփականություն համարվող՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական գրանցումը, ինչպես նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածական հաշվառումը.»:

2. 2-րդ մասը լրացնել նոր՝ 23-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «23) Սույն օրենքով նախատեսված ~~դեպքերում~~ տարածական հաշվառման առանձնահատկությունների հաշվառմամբ իրականացնում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքի և պահպանական գոտիների տարածական հաշվառում:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր՝ 47.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 47.2. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքի և պահպանական գոտիների տարածական հաշվառման առանձնահատկությունները**

1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքը (այսուհետ՝ հուշարձանի տարածք) և պահպանական գոտին տարածական հաշվառման են ենթարկվում հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ հուշարձանների պահպանության լիազորված մարմին) նախաձեռնությամբ՝ վերջինիս կողմից կազմված հուշարձանի տարածքի, դրա պահպանական գոտիների հատակագծի, ինչպես նաև հուշարձանի անվան և պետական ցուցիչի հիման վրա:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի պահպանական գոտին կամ հուշարձանի տարածքն ընդգրկում է համայնքին կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամաս կամ դրա մի մասը, ապա այդ պահպանական գոտու կամ հուշարձանի տարածքի տարածական հաշվառումն իրականացվում է հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից նախապես տվյալ հողամասի սեփականատիրոջ (սեփականատերերի) գրավոր համաձայնությունը ձեռք բերելու դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և հուշարձանների տարածքների և դրանց պահպանական գոտիների հատակագծերը կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից՝ «Տարածական տվյալների մասին» օրենքով սահմանված ազգային գեոպորտալի «Օ Ջի Սի Վի ~~Մի~~ էմ Էս» (OGC WMS) առցանց քարտեզագրական ծառայության միջոցով հասանելի բազային տարածական տվյալների հիման վրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տարածական հաշվառումը անշարժ գույքի պետական ռեգիստրն իրականացնում է հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների հատակագիծը, հուշարձանի անվան և պետական ցուցիչի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ նաև սեփականատիրոջ (սեփականատերերի) գրավոր համաձայնությունը հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից

ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, որը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ ևս տասն աշխատանքային օրով՝ ներկայացված փաստաթղթերի մեծածավալությամբ պայմանավորված:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատակագծերի օրինակելի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները, հատակագծերի կազմման և ներկայացման և տարածական հաշվառման իրականացման կարգը սահմանում է ~~Կառավարությունը~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հուշարձանի, հուշարձանի տարածքի և պահպանական գոտու տարածական հաշվառման դեպքում պարտադիր նշում է կատարվում համապատասխան հուշարձանի անվան և հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից տրամադրված պետական ցուցիչի վերաբերյալ:

7.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տարածական հաշվառում իրականացնելուց հետո հուշարձանի, հուշարձանի տարածքի կամ պահպանական գոտու հաշվառման վերաբերյալ անհամաձայնությունների դեպքում համապատասխան անշարժ գույքի սեփականատերը կարող է տարածական հաշվառման փոփոխություն կատարելու դիմում ներկայացնել հուշարձանների պահպանության լիազորված մարմնին, որը քննվում է եռօրյա ժամկետում:

8. Դիմումի բավարարման դեպքում հուշարձանների պահպանության լիազորված մարմնինը եռօրյա ժամկետում հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների փոփոխված հատակագիծը ~~Կառավարության~~ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է անշարժ գույքի պետական ռեգիստր՝ սույն հոդվածի ~~3~~4-րդ մասով նախատեսված ժամկետներում տարածական հաշվառման տվյալներում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

9. Դիմումի մերժման դեպքում հուշարձանների պահպանության լիազորված մարմինը դիմում ներկայացնող անձին հիմնավորում է տարածական հաշվառման տվյալներն անփոփոխ թողնելու պատճառները:»:

Հոդված 5. ~~**Եզրափակիչ և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 4-րդ հոդվածի:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ութ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ~~ՀՀ~~ կառավարությունն ընդունում է հուշարձանի տարածքի և դրա

պահպանական գոտիների հատակագծերի օրինակելի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները, հատակագծերի կազմման և հատակագծերի ներկայացման և տարածական հաշվառման իրականացման կարգը սահմանելու մասին որոշում:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը և 4-րդ հոդվածն ուժի մեջ ~~է~~ են մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության ~~Կառավարության~~ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-978-03.12.2024-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում լրացվող նոր պարբերության հաջորդականությունը հստակեցնելու նպատակով առաջարկում ենք՝ Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «հոդվածում. 1. վերջին չհամարակալված պարբերության «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, 2. վերջին չհամարակալված պարբերությունից հետո լրացնել նոր չհամարկալված պարբերություն հետևյալ բովանդակությամբ.» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	Կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք՝ Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածում լրացվող նոր պարբերության «տարածական հաշվառում» բառերն գրել թավ տառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Հաշվի առնելով, որ Օրենքում, ինչպես նաև Նախագծում սահմանված չեն տարածական հաշվառման իրականացման դեպքերը առաջարկում ենք՝ Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր՝ 23-րդ կետում «Սույն օրենքով նախատեսված դեպքերում» բառերը փոխարինել «Սույն օրենքով նախատեսված տարածական հաշվառման առանձնահատկությունների հաշվառմամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	**Նախագծի 4-րդ**	Հստակեցնելու նպատակով, թե ում կողմից և ոնց է իրականացվելու Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 47.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նախաձեռնությունը, առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 47.2-րդ հոդվածի 1-ին մասում «նախաձեռնությամբ» բառից հետո լրացնել «՝ վերջինիս կողմից» կետադրական նշանը և բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	**Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներ**	Նախագծում և Օրենքում եզրույթի գրելաձևի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 47.2-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «կառավարության»,	Ընդունվել է	Ընդունվել է

			5-րդ մասում՝ «Կառավարությունը», 8-րդ մասում՝ «Կառավարության» և Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «ՀՀ կառավարությունն», 3-րդ մասում՝ «Կառավարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:		
6.	Կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդված**	Առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 47.2-րդ հոդվածի 3-րդ մասում «Օ Ջի Սի Վի Մի Էս» (OGC WMS)» ձևակերպումը վերանայել այն համապատասխանեցնելով «Տարածական տվյալների մասին» օրենքում կիրառված ձևին: Մասնավորապես՝ քննարկվող ձևակերպման «Մի» տառերը փոխարինել «Էմ» տառերով՝ ապահովելով հայերեն ճիշտ տառադարձությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	**Նախագծի 4-րդ**	Առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի՝ նոր լրացվող 47.2-րդ հոդվածի 4-ին մասում «համաձայնությունը» բառից հետո լրացնել «հուշարձանների պահպանության լիազորված մարմնի կողմից» բառերը՝ նպատակ ունենալով հստակեցնել, թե պահանջվող տեղեկատվությունն անշարժ գույքի պետական ռեգիստրին ու՞մ կողմից է ներկայացվելու: Բացի այդ, առաջարկում ենք Օրենքի՝ նոր լրացվող 47.2-րդ հոդվածի 4-ին մասի վերջում լրացնել «:» կետադրական նշանը:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդված**	Առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 47.2-րդ հոդվածի 8-րդ մասում տեղ գտած վրիպակն ուղղելու նպատակով «3» թիվը փոխարինել «4» թվով:	Ընդունվել է	Ընդունվել է

9.	Կառավարություն	**Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիր**	Առաջարկում ենք՝ Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրն հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	Կառավարություն	**Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր**	Առաջարկում ենք՝ Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում «օրենքի» բառից հետո լրացնել «3-րդ հոդվածի 2-րդ մասի և» բառերը, միևնույն ժամանակ նույն հոդվածի 3-րդ մասում «օրենքի» բառից հետո լրացնել «3-րդ հոդվածի 2-րդ մասը և» բառերը, նկատի ունենալով, որ Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավահարաբերությունները կիրառելի կլինեն միայն համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
««ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «մասի» բառը փոխարինել «չհամարակալված պարբերության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:»:	Ընդունվել է	Ընդունվել է